



կրնար կաթնեղէն եւ ձկնեղէն ճաշակել, աւելորդ է ըսել՝ աւելի ստէպ՝ քան միս ու մսեղէն:

Վանականին խորհուրդ ու խրատ կը արուէր գինիէ եւ ուրիշ ոգելից բմպելիներէ խոյս տալ եւ նոյն իսկ քանի մը վանքերու մէջ (ինչպէս Լիմ ու Կոռուց) անոնց ճաշակումը արգելուած էր:

Տնօրինումներ պահեցողութենէ եւ ըմպելիքէ ժուժկալելու՝ պարագաներու համեմատ նախատեսուած ու շնորհուած (Հացունի Հ. Վ., Ճաշեր ու խնձոցներ հին Հայաստանի մէջ, Վենետիկ, 1912, էջ 274—309 եւ 402—409, Ալիշան, Հայաստանում, Գ., էջ 218—219, Սարգիսեան, Տեղագրութիւնը, էջ 279, Արարատ, 1905, էջ 548):

Առաջին շրջաններու ճգնաւորներու եւ վանականներու մեռացումի նուերումը՝ յաջորդ դարերուն՝ նոյն ջերմութեան մէջ չի մնար: Անոնց հետեւողներու թիւը կը նուազի: «Նդիշէն» մէկ կողմէ նկատի ունենալով «հարաւային» միանձններու չարքաշութեան եւ պահեցողութեան լուսաշող նկարը եւ միւս կողմէ աչքին առջեւ տեսնելով հայ վանականին կերտումի արամադրութիւնն ու յարումը, կը գրէ՝ «Մրգուղք անյաղ եղաք ի կերակուրս եւ առանց չափոյ արբաք գինի պղտորիչ խորհրդոց եւ մտաց... ոչ ճաշակեցին քիմք ոգւոց մերոց զկերակուր երկնային վասն զի պարուրեցաք զանձինս մեր ի զանազան խորտիկս» (Մատենադրութիւնը, էջ 163):

Դիոնեսիոս Բարսալիբի հայ կրօնաւորները կը պարսաւէ թէ՝ «Միս կ'ուտեն եւ կ'ըսեն եղան ու ձկան միսեր միեւնոյն են... Ուտաի Հայերը իրական կրօնաւորներ չունին... Դրսէն կը ցուցնեն թէ՛ կը պահեն եւ ծածուկէն կ'ուտեն անոնց կրօնաւորները» (Էսապալեան Հ. Պ. Դիոնեսիոս Բարսալիբի Հակաճառութիւնը Հայոց գէմ, Վիեննա, 1938, էջ 80—81): Նա այլուր կը շեշտէ՝ «Հիմայ ժամանակը չէ կրկնելու թէ (Հայերը) իրականին կրօնաւորութիւն անզամ չունին, բաց ի նքնմէն եւ կնքուղէն, զոր կը հանգնին ոչխարներու եւ այծերու նման: Ծանօթ է թէ՛ ոչ մէկ քրիստոնէայ ժողովուրդներու մէջ կայ բրդազգեստ (կրօնաւոր) որ միս ուտէ, բաց իրենցմէ՝<sup>50</sup>»

<sup>50</sup> Ուրիշ ասորի մը՝ Յովհաննէս Բար-Շուշան կը գրէ թէ՛ հայ կրօնաւորը՝ «Ուտէ միս յամենայն»

(անդ, էջ 103—104): Եւ իրօք Կիրակոս վարդապետ, զոյգ Ներսէսներ՝ Շնորհալի ու Լամբրոնացի, Սարգիս վարդապետ եւ Գրիգոր Տաթևացի որկրամուկ եւ զինեւէր արեւդաներու գէմ կը բողոքեն եւ զանոնք ուղղութեան կը յորդորեն (Հացունի, Ճաշեր եւ խնձոցներ, էջ 293—298): Վերջին դարերու մէջ Ագուլիսի Ս. Թովմասի վանքի տխուր նկարագրութիւնը կ'ընէ յիշատակագիր մը՝ «Եւ կեցեալ ի խոհակերանոցէն դուռնն Աստուծոյ եւ զառաստաղ նորին իբրեւ զնորայն սեւացեալ լինէր ի ծխոյ թոնրաց: Եւ փոխանակ անուշահոտութեանց խնկոց եւ կինամոնաց (ս)տաշլից եւ կընդըրկաց զհոս ճենճերայից զոհից կայր... ճարճատմունք եւ որոտմունք ձուազեղաց լինէին» (Վ.Վ. Բ. էջ 699—700):

20. ԱՂՕԹՔ ԵՒ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Հայ մատենագիրները<sup>51</sup> ստէպ կը ներբողեն հայ ճգնաւորին ու վանականին խոկումն ու խորասուզումը, կրօնական գրքերու ընթերցումն եւ մանաւանդ աղօթասիրութիւնը: Ուտաի եւ աւելորդ է անոնց վրայ ծանրանալ: Սակայն յարմար կը դատենք ժամերգութեան կամ ժամասացութեան քանի մը սող ձօնել: Այդ՝ վանակա-

ժամանակի անխափան՝ ամենայն համարձակութեամբ եւ առանց համ որկորին գնելոյ» (Վարդանէան Հ. Ա., Յովհ. Բար-Շուշանի Հայոց կաթողիկոսին դրած թուղթը, Վիեննա, 1923, էջ 89—90):


<sup>51</sup> Ստեփանոս Օրբէլեան (Պոմ. գլ. ԿԲ ԵԵ) Սիւնիքի վանքէէ շատերը (Թանահատ, Սոտակերաց, Ծատանեաց, Երեցալանք ԵԵ) «Մշտապաշտուն» կը ներկայացնէ: Հ. Ինճիճեան կը գրէ «Չսոսա զամենեսին համարիմ ի կարգի Անհանգստից վանաց, որք փոխանակ՝ կարգաւորութեամբ միտից վանաց, որք փոխանակ՝ փոխանակելով միշտ կազան զկնի միւսոյ դասուն փոխանակելով միշտ կատարէին զպաշտօն Աստուծոյ, նմին իբի կոչեցան մշտապաշտունք, զի զայլ խտիր չդասանմ ընդ սոսա եւ ընդ միւս վանորայս, որք թէպէտ յաղօթս պարսպէին եւ զսովորական պաշտօնն կատարէին, այլ ոչ կոչեցան մշտապաշտունք» (Հնախօսութիւն, Գ., էջ 207): Եւ նա այնպէս կը համարէ թէ՛ այս կարգաւորութիւնը Ս. Մահակէն կու գայ կը հասնի՝ Մովսէս Սորենացիի վկայութեան համաձայն՝ «Սա ամենայն ատաւելեանց հարց նմանեալ՝ աղօթիցն մասամբ ստաւելեաց, քանզի ստացաւ աշակերտս վաթսուն ըստ մայրաքաղաքացն Սպուդից, արք կրօնաւորք... որովք մշտնջենաւոր պաշտամամբ կատարէր զկանոնն (Պոմ. էջ 240 եւ 270): Ինճիճեանի այս զոյգ վարկածներն այնքան ընդունելի չեն թուիր: Վանք մը կարելի է մշտապաշտուն համարել, ուր ինչպէս Լիմի եւ Սեւանի մէջ ժամերգութիւնները եւ աստուածային միւս պաշտամունքները լիպակն եւ գրեթէ շարունակաբար ու անդադրում կը կատարուէին: Իսկ մշտապաշտուններու մտաքը Հայաստան Ս. Մահակի միջոցով Թովհան անհատական կը գտնէ, վասն զի Սպուդեայները 430—440 է շրջաններուն երեւան կու գան եւ այդ ատեն անկիւս ուրիշ կարեւոր գրադումներ ունէր (Anfänge, էջ 27):

նէն նաեւ ժամանակ կը պահանջէր եւ անոր մէկ կարեւոր դրադումն էր: Այդ՝ աղօթքի մէկ տեսակն էր՝ հասարակութեան հետ, հասարակութեան առջեւ անոր անունով եւ անոր համար:

Ասողիկ կը հաստատէ թէ Նարեկի մէջ ժամասացութիւնն ու եկեղեցական երգեցողութիւնը մասնաւոր ուշադրութեան առարկայ են<sup>52</sup> եւ կը մշակուին՝ «Այսպէս եւ յայսմ ժանակիս շինեցաւ... բաղմադարդ պաշտօնապայծաւ երգեցողութիւնը եւ զրական գիտողք» (Պոմ. էջ 174): Դարձեալ նա կը շեշտէ՝ «Եւ զԴաւթեան նուագն հնչեցուցանել ի գիշերի եւ ի տուրնջեան հանապարդեան փառաբանութեամբ» (Անդ էջ 176):

Սարգիս եւ Կիրակոս — վանական կեանքի նոր զարկ տուողները — ժամերգութեան արժէքը գնահատելով անոր մասին յատուկ որոշումներ կու տան՝ «Այլ եւ զկարդ ժամատեղացն սահմանեցին, զառաջին ժամ գիշերոյն պաշտամամբ կատարել ի տէրունի աւուրսն եղանակաւ Յիշեսցուք այլովքն եւ երկու կանոն սաղմոս եւ վերջն կանոնադրուի ձայնիւ եւ հանդատեան շարական եւ աւետարան, պաշտօն վասն ննջեցելոց եւ օրհնութիւն ըստ խորհրդոյ աւուրն, եւ ի վերայ՝ քաղուածք շարականաց եւ թաղաւորք եւ աւելուք ձայնիւ նոցին, զկնի ընթեռնուլ զՅայսմաւուրք եւ ի վերայ նորա շարական ըստ պատշաճի ճառին, որ ընթերցաւ եւ զկնի երկու կանոն եւս սաղմոս. զհետ նորին հարցն իւրովք սարօքն եւ զարեւելից ժամն իւրով կանոնաւ սաղմոսովն եւ զկնի առաւօտեան ժամուն եւ երեկոյի ժամուն, յետ արձակելոյն զիրս խրատականս ընթեռնուլ յամենայն աւուրն: Եւ զերրորդ ժամ ցերեկին եւ զվեցերորդ ժամն եւ զիններորդ ժամն իւրեանց նշանակեալ սաղմոսովն, զատ եւ որիչ ի միմեանց յիւրաքանչիւր նշանակեալ ժամու ատէին<sup>53</sup> եւ զկնի զպա-

տարազն սուրբ մատուցանէին եւ զարարողութիւն պատարագին՝ դպրօք եւ սարկաւադօք եւ իւրաքանչիւր ոք իւրովք նշանակեալ զգեստունքն, ամենեքեան խոստովանեալ եւ ապա զգեստաւորեալ, ահիւ եւ զուղութեամբ կալ առաջի պատարագին եւ մտաւոր եւ սրտաուռ աղօթել եւ գիտել ի սրտի թէ՛ զինչ աղօթեն եւ ի սկզբանէ պատարագին մինչեւ ի վախճան ցընթերցումն «Իբրեւ ճաշեցին» Աւետարանին անդադար եւ անմիջոց հեղուին զարտասուս ի մէջ եկեղեցոյն իբրեւ զբղխումն աղբեր: Եւ զկնի պատարագին, ոչ վաղվաղակի առնուին կերակուր, այլ յերանկն յեկեղեցոյն լուրեայն ընթանային իւրաքանչիւր ոք ի



Լիմ անապատի Ս. Գեորգ եկեղեցին (Վ.Վ. Ա., էջ 3)

խուղան իւր... եւ անդ եւս ի խցին ժամ մի առանձին աղօթիւք անցուցանէին» (Առ. Դաւրթ. Պոմ. էջ 258): Կարծես այս այն կեանքը եւ ժամասացութեան ընթացքն է որ Սեւանի վանքին մէջ կար (Հմմտ. Շահխաթունեան, Ստորագրութիւն, Բ. էջ 208. Հովիւ, 1906, էջ 663—664, Արեւել. Մամուլ, 1896 էջ 45—47, Արարատ, 1906. էջ 616—628, Գիւտ Եպիսկոպոս, Սեւանայ վանքը, Վիեննա, 1929, էջ 44—45. 105—109):

Ժամասացութեան նոյն կարգն ու կանոնները<sup>54</sup> Ներսէս Սոկայցին եւ Ստ. Շա-

<sup>52</sup> «Եւ պաշտօն սաղմոսերգութեան անխափան կացել ի տուրնջեան եւ ի գիշերի, ըստ օրինակի հօր հովուապետի, զի ամենուրեք չէ օրէն եւ իշխանութիւն յապագել զայն կարգս պաշտաման կամ նորաձեւութիւն ոչ առնել, այլ միշտ ի նմին յարմարայ» (Ղլածեան Կան. Հայոց. էջ 16, Ս. Մահակի կան. Գ. Հմմտ. Եւ նոյնին՝ կան. Զ. անդ էջ 17) եւ զարձեալ նոյնին կան. Ժ. անդ էջ 22):

<sup>53</sup> «Յաճախապատում» ի հեղինակը կը յորդորէ՝ «Եւ հասարակաց պաշտօնն մի պատճառաւոր ինչ խարանեցի, բաց թէ ի պէտս ինչ եկեղեցոյն կրողը հրամանաւ վերակացուն, սակայն եւ անդ կատարեցի աղօթքն» (էջ 254):

տարիցին Լիմի եւ Կտուցի մէջ կը ներմուծեն, ինչպէս Մանուէլ Կիւմուշեանցին (Արարատ, 1871, էջ 87 եւ անդ, 1906. էջ 618) կը հաւատէ եւ Հ. Սարգիսեան կը գրէ՝ «Կարգ աստուածային պաշտամանց անթերի եւ անխափան նաեւ առաւելութեամբ իսկ (կատարի) ... կարգ սաղմոսերգութեանցն, որպէս կարգեալ սահմանեցաւ ի նախնեաց ի սոսա (Լիմ ու Կտուց) կատարի անթերի, եօթնիցս յաւուրն պաշտել անխափան զժամերգութեան եւ զուրթ կանոն սաղմոսացն բաժանեալ ի նոսա, իսկ յուրբաթու ինն կանոն եւ զգլխերային հսկմունսն տէրունական տօնից ըստ ցուցակին անխափան կատարեալ առանց իրիք նաւազութեան եւ անձանձրոյթ: Եւ ըստ յաւելեալ սահման մուց առ երկարածիք ժամերգութեան ամուսնանան ի սենեակս իւրաքանչիւր յընթերցումն հոգեւոր մատենից<sup>55</sup>» (Տեղադրութիւնք, էջ 278, Վ.Վ. Ա. էջ 49, հմմտ. եւ Արձագանք, 1882, էջ 3 2):

Մերձեանք ուրիշ վանքերու. Սարգիս Սորբեցին՝ «Ուսոյց զամենայն ծովեղերս Վասպուրական դաւառիս ժամօք եւ պատարագօք» (Վ.Վ. Բ. էջ 402), իսկ Յովհաննէս Մեծօրեցիին՝ «Չարգարեաց զուրբ ուխտն (Մեծօրեայ) ժամօք» (անդ էջ 430): Եփրեմ քահանան 1354ին Վարազի Աստուա-

ծաշունչ մը կը նուիրէ՝ «Այնու դաշամբ... արասցեն զգլխերային պաշտօնն եւ օծցեն խաչ սուրբ յանուն հօր իմոյ Գրիգոր քահանային եւ զեօթն օր ընթերցմունքն՝ զաղօթն կատարեցեն» (անդ, Ա. էջ 298): Ս. Բարթոլոմէոսի վանքի մէջ «Անպակաս է պատարագ եւ ժամակարգութիւն ի զբանէ սուրբ առաքելոցս, զի քան զքսան եւ զերեսուն անպակաս է կարգացողք եւ սաղմոսերգութիւն ի ժամատեղեացս» (Հանդ. Ամս. 1942, էջ 188):

Սակայն վանքերու մէջ պակաս չէին գաղջ ու թոյլ ոգիներ, անխիղճ եւ ծոյլ վանականներ (Մելիք-Թանդեան, Հայոց եկեղ. իրաւունքը, Ա., էջ 535): Վերոյիշուած Ս. Բարթոլոմէոսի Ստեփանոս առաջնորդը «Արարեալ էր (զայն) զուրկ ի պաշտամանց եւ ի պատարագաց եւ բնաւ իսկ ի ժամակարգութեանց» (Հանդ. Ամս., 1942, էջ 191): Վերջին ժամանակի գրիչ մը՝ անշուշտ փորձառութեան կ'ըսէր՝

«Սաղմոսն աղբիւր կենդանարար... իսկ որք չասեն ի քուն լինին, Եւ սաղմոսին ոչ փափազին, Յանմահական հացէն սովին, Յաւուր մեծի դատասանին: Թէպէտ կենան գիշերն արթուն, Դատարկ ելցեն ի սուրբ վարձուն: Իսկ որք ասեն ծայրատելով Անմտարար շաղթաղթելով, Վա՛յ է նոցա պահեալ յոլով Ձի յԱստուծոյ են ամօթով: Իսկ որ ծայրատ սաղմոս ասէ Կիսատ անով յաւարտ անէ, Նա յԱստուծոյ ամօթ կրէ Եւ ի բարեացն անմասն ելցէ»: (Արարատ, 1894, էջ 252:)

21. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀԱՂՈՐԳՈՒԹԻՒՆ  
Հայ բոլոր վանականները — մանաւանդ առաջին շրջաններուն — քահանայական ձեռնադրութեան չէին ընդունիր: Անոնցմէ մաս մը եւ այն երբեմն շատ նուազազոյն տօնապահութեան աստիճանին կը բարձրանար եւ քարոզչութեամբ եւ խորհուրդներու մատակարարութեան կը նուիրուէր: Պատարագի Ս. Չոհր կը մատուցանէր եւ Ս. Հաղորդութիւն կը բաշխէր: Արդէն ծանօթ իրողութիւն է թիւ կամ լուս պատարագի ծագումն ալ (եւ յաճախութիւնը)

Եւ իւրեանց ընտրեալն Անեցին խմբք զանկակեայ տաղ տօբանով եւ հաճոյանամբ կանանցն սրպէս նոյն առնէ: ... Գտաք զի գերբորոն եւ զվեցերորդ եւ զիններորդ ժամն ճաշու ի միասին կատարէին (Լապիտեբորդ ժամն ճաշու ի միասին կատարէին իւր-իւրինք) եւ ի նոցանէ զօրացեալ զիւրաքանչիւրս յիւր ժամն կատարեմք եւ եօթն անգամ յաւուրն զԱստուած օրհնեմք:

Գտաք զի պակասեալ էր ի վանօրէիցս խաղաղական աղօթքն եւ առ նոսա տեսեալ հաստատեցաք, նախ ժողովել յեկեղեցի յաղօթս եւ ապա ի մահիճս հանդէպ: Գտաք զի չունէին օրհնութիւն կրօնաւորացն: Գտաք զի չունէին օրհնութիւն կրօնաւորացն, այլ քահանայացուցեալ միայն զձեւն տային եւ ըստ նոցա նախ օրհնեմք կրօնաւոր եւ ապա սարկաւազ եւ քահանայ կատարեմք... Գտաք որ զկէս կաւազ եւ քահանայ կատարեմք... Գտաք որ օրհնամին մի անգամ ուտեն կրօնաւորքն եւ գնոյն օրհնամին զրեցաք...» (ընտիր մատենագիրք, Գր. կաթ. Տղայ եւ Ներսէս Լամբրոնացի, Վենետիկ 1838, էջ 235-237, հմմտ. Տաշեան, Մայր ցուց. հայ. Ձեռ. Վեհ. Մխիթ. Մատ., էջ 334): Լամբրոնացիին նուիրուած ներքոյից մը մէջ կ'ըսուի՝ «Ուսոյց (Ներսէս Լամբրոնացի) բարեկարգապէս կրօնաւորացն հաստատել սահմանաւորեալ օրհնութեամբ կրօնաւորութեան, սքեմով եւ կնիկով, եւ պարկեշտանալ կերակրով եւ կանոնաւոր բարեձեւութեամբ զարցն օրհնակ բերելով: Թարգմանեաց զուրբ Հարցն զվարան եւ զարբոյն Բենետիկոսի կրօնաւորական սահմանաւորութիւն» (Ալիշան, Հայագիտութ., Բ., էջ 423):  
<sup>55</sup> Լիմի մէջ միաբանները՝ «Ժրաջան էին յաղթօք» (Վ.Վ. Ա., էջ 27), Մելիքեանի վճանցին՝ «Ի գիշերի կանխէր յաղօթս» (Առ. Դաւրիթ., էջ 396), եւ Գաւիթ Բաղդեցիին հօն կը տեսնէ «Չարգարեացն սուրբ եկեղեցոյ եւ զպաշտամանց արթն» (Վ.Վ. Ա., էջ 30-31):

վանքերէ յառաջ եկած է (Գաթրճեան-Տաշեան, Սրբազան Պատարագամատոյցը Հայոց, Վիեննա 1897, էջ 100-101): Հոսի սիմեաններու պատմութեան մէջ կը կարդանք՝ «Եւ անդ ի լեառն Վարազ ամրացեալք... Այսպէս երկուք ոմանք բնակեցան ի նմին տեղուջ մինչեւ ցօր կոչման... եւ տեղիք նոցա կոչին Ուրբաթայք, քանզի յուրբաթէ յուրբաթ մատուցանէին զսրբութեան (սրբութեամբ) պատարագն եւ բաշխէին արժանաւորապէս սուրբ կանանց զմարմին եւ զարիւն Տեառն» (Մատենադրութիւնք Մ. Սորենացոյ, էջ 302):

Սարգիս Սորբեցին եւ Յովհաննէս Մեծօրեցիին — զարեւր յետոյ — վանքերը՝ «գարգարեն — պատարագօք» (Վ.Վ. Բ., էջ 402, 430): Մինչ Ս. Բարթոլոմէոսի վանքի առաջնորդը անխիղճութեամբ զայն զուրկ ի պաշտամանց եւ ի պատարագաց կ'ընէ (Հանդ. Ամս., 1942, էջ 191), ուր մինչ յառաջ «անպարապ է(ր) պատարագ» (անդ, էջ 188):

Վանական կենքի վերածնունդի ուսման ժամանակը՝ Սարգիս եւ Կիրակոս կը սահմանեն՝ «Եւ ի տէրունական աւուրն զգլխերն պաշտամամբ անցուցանել մինչեւ ցառաւօտն եւ ի սոյն աւուրն անխափան մատուցանել պատարագ» (Առ. Դաւ. Պատմ., էջ 259):

Նմանապէս պատարագի ջերմեանաւորութեան եւ վանական բարեկարգումի հետամուտ է Սիմէոն Այրեւմանցիին՝

«Բնակեցաւ ի մեծափառ սուրբ ուխտն յԱյրեւմանս եւ զամենայն կարգս եւ զասմանս ուղղեաց ըստ առաջին սուրբ հարցն ուխտ եղեալ յամենայն օր ասել ձԾ սաղմոսն Դաւթի եւ անխափան կատարել զաստուածային պատարագն ի շարաթ եւ ի կիրակէի եւ յամենայն մեծամեծ տօնս... Եւ կեցեալ սուղ ինչ ժամանակ ապա եկեալ բնակեցաւ ի սուրբ ուխտն Չաղապանք եւ վերստին կարգեաց զամենայն բարի կարգս եւ օրէնս յերկրին կոտեաց ի կարգաւորս... արեղայք թողեալ զվանս եւ զանպատոս եւ զամենայն հոգեւոր ուսմունս ի գեղս բնակէին...: Եւ կանոնս եւ օրէնս հաստատեաց զի արեղայք ի վանս բնակիցեն իւրեանց հանգրծելու բրդեղէն, մաշկեղէն կամ մաղեղէն՝ ըստ առաջնոցն եւ աշխարհի երէց ի պահ ժամանակի գինի մի ըմպիցէ եւ ձէթ մի ուտիցէ եւ կապուտ փաթթէ ի գլուխն, զձԾ սաղմոսն երգէ իւր ընկերօքն յեկեղեցի եւ գերեք

յիսնական կենայ պահօք շարաթ եւ կիրակին, զղջացեալքն միայնակեացքն եւ ապաշխարողքն: Իսկ պատարագողք արեղայքն եւ ճգնաւորքն բոլոր կենան գլխանակաց պահան եւ յօրն որ պատարագ մատուցանէ՝ լեզուան ասէ զուրթ կանոնն (Սաղմոսն) անխափան եւ գինի եւ միս մի ուտիցէ այն օրն ըստ առաջին հարցն: Այլ եւ զամենայն սահմանս եւ զկարգ վանիցն ուղղեաց ըստ առաջնոցն, եթէ բնակիչք որ լինին ի մի խորհուրդ եւ ի մի բան եւ մի գործ, այսինքն երեք տեղ՝ ի ժամատեղն, ի հացատեղն եւ ի բանատեղն, հնազանդ լինին առաջնորդաց եկեղեցոյ եւ առանց հրամանի կրօնաւոր ի վանացն մի ելցէ յուրից գործ: Այլ եւ զվանքն պարտեաց եւ ամրացոյց եւ որոշեաց ի յաշխարհականացն, զի արեղայ ի շուրջ պատի կողմն բնակեցէ եւ սանամայր մի արացէ եւ քոյրաքոյր եւ մայրաքոյր եւ ամուսն եւ ձմեռն ի մի վայր ժողովին ի բնոյ ժամն ըստ առաջնոց սահմանին» (Ալիշան, Հայագիտութ., Գ., էջ 218-219):

Վանքերը շատ անգամ ժողովուրդին ցանկութեան ընդ առաջ երթալով տարեկան պատարագներու պարտաւորութեան տակ կը մտնեն — բայց ոչ՝ առանց փոխարինութեան (հմմտ. վանքերու մուտքը):

Այն վանականները, որոնք քահանայական օծում չունէին՝ անոնք Ս. Հաղորդութեան կը մերձենային: «Նորեկները ի կատարել տարւոյն... հաղորդէին» (Առ. Դաւրիթ. Պատմ., էջ 259):

Շատ բնական էր որ ոչ քահանայ վանականները պատարագի ներկայ գտնուէին (հմմտ. վերը), բայց քահանային յատուկ զործերէ հրաժարէին: Գրիգոր Լուսաւորիչը անպատականին կ'արգիլէ մկրտել եւ օրէնք տալ (Ղլտճեան, Կան. Հայոց, էջ 11): Բայց փէին, սղաւորները մխիթարէին եւ կարիք ունեցողներուն օժանդակէին — բարոյապէս եւ նիւթապէս (Մխիթարեանց, Պատմ. Ժող., էջ 25): Եւ այդ ստպարէպներու մէջ հայ վանականներու զործունէութիւնն ու արժանիքը չէ կարելի անտեսել (հմմտ. վերը եւ Առ. Դաւրիթ. Պատմ., էջ 258):

(Շարունակելի): ԳԿՏ. Հ. Հ. ՈՍԿԱՆՆ